

ծածուած, ընդում Պ. Հ. Աճուրի Արմա. բառ. էջ 572ի մէջ ըստին:

Ուրիմն Հ. Արսէն Բագրատունոյն (Զարգց. էջ 24, թ. 49) Աստուծոյ և աստուածոյ բառներու միջէն ըրած զանազանոթիւնն ամենածիշտ է:

Խնդրոյս նկատմամբ Հ. Ա. Աւետիսինակ և Հանդ. Ամս.ի (1907) մէջ ունի գրութիւն մը, զոր Պ. Աճու. (էջ 579) «Մի ձանձրանալի յօդուած» կ'անուանէ, որովհետ գրեթէ իր գրածին չափ ընդարձակ է, բատին ծագման մասին յիշած այլայլ կարծիքներուն հետ իրենն ալ արդար գործացոցից լուծում մը չի տար: Աստուծ բատին հորդման նկատմամբ՝ կը մերժէ անոնց կարծիքը (Meillet, Karst, Hübschmann ևն) որ Ասուուծոյ ձեզ ընտիր չեն համարիր, բայց առանց համոզի փաստ մը, առանց բաւական պատճառ մը տալու, այլ միայն կը մերժէ:

Պ. Աճառենան իր այդ գիւտին մէկ մասը՝ անուանի ուսուցչապես Պ. Մատին կը պարու (էջ 579) և միւսը (էջ 573) Պ. Մէլետի (Meillet): Պարծանարէ է արդար Ազգին՝ որ այսպիսի տաղանդաւոր և կորովամիտ գիտնականաց սէրն և ուշագրութիւնը կը վայելէ: Կը յարգեմ երկուովն ալ իրենց լեզուարանական բամահմուտ հետազոտութեանց մէջ, սակայն՝ իրենց ազնիւ և երրուամտութեան հանդիպելու յուսով՝ պիտի համարձակէի բաելու, որ՝ օտարազգի մը նրան ալ մեր լեզուն սորվի, չի կրնար անոր հայու պէտ սիրանալ և անոր մէջը թափանցիլ, պիտի զըստուին միշտ բառեր և ոճեր՝ որդ օտարին համար մի մի զարդնիք են, մի մի խորհուրդ և կամ մի մի անլուծանելի առեղծուածներ և...:

Հ. Գրիգոր Մարտոս

1. Կոնիքիր հայագէտ Անդրեացայն Մաշտոցի թարգ. մանութիւնը կարդացողն իւսոյն կը համոզով ըստին: Ուրիշ ճիշեր, ուշափ արամարանութիւն թափէր է և ասնի էջեր չեցուցենք է հանգուցն Հայութը, տուցնեն: լու համար թէ Հայը կի՞ առեն վերափոխման տօնը՝ ոչ թէ Ա. Կուռին ի պատի կը հասարէի, այլ Քիմստոսի մարդուութեան՝ ծննդան ի պատի: Եւ այս որովհեան Հայոց Մաշտոցը այս առնին անունը ԱՍՏՈՒԱՆԱՆԻՆ կը դրէ...: Արդ ո՛ր Հայը կ'անդամանյ թէ մենք պարզապէն Աստուածանին բակեով՝ արշէն Աստուածանին ամենածծ աօնախմբութիւնը, վերափոխման կը հասկանած...: Եւ այսպէտ, յարդէւով միշտ բացառութիւնը, «աս առ ճուղե օմքնե»:

Գ. Բ. Ա. կ. Ա. ն.

## ՍՈՓՈԿԼԵՍ

### ԻԴԻՊՈՍ ԹԱԳԱԻՈՐ

(Շար. տես թագմ. 1927, էջ 384)

### ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԱՐՄՐՈՒԱԾ

ԳՈՒԺԿԱՅՆ, ԳԱՐ, ԻԴԻՊՈՍ, ԿՐԵՈՆ

ԳՈՒԺԿԱՅՆ

Ո՞վ գուք, որ այս երկրին մէջ միշտ էք յարգուած, Ո՞ն, ի՞նչ բաներ պիտի լըսէք ու տեսնէք, Եւ ի՞նչ սուլոզ պիտի համակուիք, եթէ դուք Դու փոյթ ու խնամ ունիք՝ ինչպէս կը վայլէ Հայրենակցաց՝ Լարդակոսի տան վըրայ:

Զի կը կառծնմ թէ ոչ խստրու, ոչ ֆասիս

Պիտի կրնան լըսալ այս յարկի ու մաքրել

Պղծութենէն՝ զոր իր ծոցին մէջ ունի:

Եւ շուա չարիքն ի լոյս պիտի պարզը: Իւ ակամայ՝ այլ կամաւորւ: Եւ լրկայ

Անքան ահեղ չարիք՝ որբան կամաւորն:

ԳԱՐ

Գիշ ողբարի չէին մեր նախ զիտացաներն:

Անոնցմէ դուրս ի՞նչ պիտի 'սես դուն մեզի:

ԳՈՒԺԿԱՅՆ

Միապէս ծանըը եւ ըսելն եւ լըսելն.

Աստուածազարմ Յոկաստէն ոչ եւըս է:

ԳԱՐ:

Չըւառուհիք. եւ հեղինակը ով է:

ԳՈՒԺԿԱՅՆ

Նէ անձնասպան եղաւ, բայց պինտ ցաւագինն նշաններէն ձևնէ ծածուկ կը մընայ,

Զի անսութիւնը կը պակսի: Բայց իմ մէջն եթէ մընաց յիշողութիւն ըսուած բան,

Պիտի լըսես եղկելիին տանջանքներն:

Երբոր անցաւ նէ գաւիթէն զայրազին,

Եիսակ զընաց հարսանեկան առագաստն,

Զոյգ ձեռքերովը նողելով իր մազերն:

Եւ մանելով զուոր փակեց ներէն պինդ:

Ու կը կանչէ Լայոսը՝ վաղ իսկ մնած,

Ցիշով կին ամուսնութիւնն՝ որ տըւաւ

Որդի մ' իրեն որ պիտի հայրն ըսպաննէր,

Ու հարազատ իր մօրն՝ աւագ՝ պիոր տար  
Զաւակներու ։ Նէ կը նըղովէ անկողինն՝  
Ուր կրկնապէս չըւառական՝ ունեաւ  
Ամուսին իր ամուսնէն, զաւակներ  
Իր զաւակէն: — Թէ յետոյ ինչպէս մնուա՝  
Կ'անգիտանամ. զի լոդպոյ խուժեց ներս  
Աղջակներ արձակելով, եւ արգելք  
Ծզաւ ինձի տեսնելու մանը տիկնոշ:  
Մեծք աջերնիս բացեր էնթ անոր վրայ,  
Ուր մորեգին կը վազվզէր հոս ու հոն  
Եւ մնէն ուուր մը կը խնդրէր, կը խնդրէր  
Ուր բակներ թէ մէր է իր կինն, ոչ կին,  
Եւ անդաստանը մայրենի կրկնակի՝  
Ուր ունեցան կեանք ինք եւ իր զաւակներն:  
Ասուած մը զայն կատաղին կը ցուցնէ,  
Զի հոն ներկայ նղողներէն և ոչ մին  
Սիրոտ չէր ըներ: Արարավելի ճիշով մ'ան  
Կարծեա մէկէ մ'առաջնորդուած՝ կը նետոի  
Նրեցեցիկ գրան վրայ, ծխնիչն կը հանէ  
Դուրս ազն ու փակ ու կը ցատառ ներս սենեակ,  
Ուր տեսանք կինը կախ՝ խնդրանք պուկին:  
Զայն սենելով չըւառակներ՝ կունայ  
Գազանաբար և կը կտրէ ժանան ցլաւան:  
Երբ նէ ինկաւ ու գետին վրայ պառկցաւ,  
Անեղ տեսիլ մը պարզուեցաւ աշքերուս:  
Կորզած նէրա զգեստէն ոսկի սենդներս  
Որով զսպած էր նէ զանոնիր, կը մընէ  
Վեր բիբերուն մէջ, եւ աւուին կը փորէ  
Բնելով. Ալ թող չըտեսնեն ազէտներս  
Եւ ոչ ալ իմ քըրելքուր ոնիրներս.  
Ալ թող ասկէ յետոյ մութին մէջ տեսնեն  
Խնչ որ տեսնել պէտք չէին, Աչ ալ նանշնան  
Ջորա Կ'ըզմային ճանչնաւ, Այսպէս ըսելով  
Ըստէկ ըստէկ կը վերցընէ թարթիչներն  
Ու կը ինցէ աչուրն. բիբերն արինուուս  
Դուրս ցոկելով Կ'ողողէին իր այտերն:  
Արիմսի շիթ չէր որ Կ'իշնէր յամբարար,  
Ալ թուին արիմն մ'որ կը հոսէր գունդագունդ՝  
Ոլոռն ոյոռն: — Պայթեցան այս ազէտներն  
Երկուոքին ալ կողմէն՝ եւ ոչ թէ մէկէն,  
Հասարակաց թէ ամուսնին, թէ կընոշ:  
Ո՞հ, հինն եղաւ երջանկութիւն նշմարիտ,  
Այս օր աղէտ, հեծութիւն, մահ, քարուականք:  
Դժբախտութեանց ամէն տեսակը կայ հոս:

## Պար

Եր աղէտին մէջ ի՞նչ չըւառականն:

Գիտաւան

Կ'աղաղակէ որ բանան գուռն եւ ցուցնեն  
Կադմէցաւց առնասարակ ման որ հայրն

Ըսպաննեց, իր մայրը... կ'ընէր զարչենի  
Խոսքիր, զոր չեմ կրնար բերանըս առնել, —  
Եւ ինքորինքը թերէն դուրս նետէ,  
Կ'ը անիծած անիծեալ տունը ըրմայ,  
Բայց պէտք ունի առաջնորդի, օգնութեան,  
Իր ուժէն վեր են ունեցած աղէտներն:  
Քեզ ալ ցուցնէ պիտի. անա կը բացուին  
Դուներն, ու ՚նդհուպ պիտի տեսնես տեսարան՝  
Ուր զըթութեան շարժէ անգամ թշնամին:  
(Խղիկու կը սկսի երեւալ):

## Պար

Սարսափելի՛ տեսարան,  
Ո՞հ քան ամէնն ահաւոր  
Որոնց երբէք դիպեցայ.  
Ո՞վ թշուաս, ի՞նչ մոլուցը է  
Որ քու վըրաց խոյացաւ.  
Ո՞ր դեն եկաւ ու ցափեց  
Զարութելի սոսումով  
Ճակատագրիդ վրայ չըւառաւ.  
Աւանդ, աւանդ գատարախտ,  
Կ'ուզեմ շատ բան քեզ հարցնել,  
Կ'ուզեմ շատ բան իմանալ,  
Բայց չեմ կրնար վրայ նայիլ,  
Կու տաս սարսուու մ'ինձ ահեղ,

## Իդիպոս

Ալ, այ, այ, այ, ոհ աւանդ  
Թշուառայեղոյ իմ անձիս,  
Ո՞ւր եմ արդեօթ եղկելին,  
Ո՞ւր կը փախչի կ'երթայ ձայնս,  
Աւանդ, ով բախտ, ուր փախար:

## Պար

Ան փոխուեցաւ անլուր, անեղ սոսկումի:

## Իդիպոս

Թանձրադանդազ՝ ատելի  
Խաւար, զիշեր սոսկալի,  
Ցաւերժական անսահման:  
Աւանդ, աւանդ, անգամ մ'եւս.  
Ո՞հ, ինչպէս զիս կը բզբխէն  
Խայթոցներու սուր կոկիծն,  
Աղէտներու յիշատակն:

## Պար

Եւ զարմանք չէ որ կոկին  
Տանջանքներու մէջ քու այդ,  
Կոկին ցաւեր արտասուես,  
Եւ կրկնակի հանգուրժէւ:

## ԽՈՒԳՈՍ

Ո՞չ բարեկամ, ունք միակ  
Հաւատարիմ իմ ծառաս,  
Զի դուն զեռ ինամ կը տանիս  
Միրով ինձ կոյր զայացուիս,  
Ո՞հ, չեմ խաբուիր, հակառակ  
Մութին՝ որ զիս կը պատէ<sup>4</sup>  
Կը ճանչնամ ձայնը որոշ։

ՊԱՐ

Ի՞նչպէս կրցար քու աչուրներգ իւլեւ,  
Անագորոյն. քեզ ո՞ր աստուածը դրդեց։

## ԽՈՒԳՈՍ

Ապողոնն էք, Ապողոնն,  
Սիրելիներ, ինք պատճառ  
Չարիներուս անաւոր,  
Կտառանիներուս անողորմ,  
Ուրիշ ոչ ոք խոսեց  
Աչուրներս, այլ ես ինքս,  
Եւ ի՞նչ հարկ ինձ տեսնելու  
Երբ պիտի ոչ ինչ ինձի  
Ալթիք բերկանք և հաճոյք։

ՊԱՐ

Շատ ճշմարիս կը խօսիս։

## ԽՈՒԳՈՍ

Եւ արդ ի՞նչ բան կը մընայ  
Որ կարենամ հանգրով  
Տիսնել՝ սիրել եւ լըսել,  
Սիրելիներ, գանեցէք  
Ջիս այս տեղէն, վասրեցէք  
Զիս քրէիբուրս, նրգովեալս,  
Դից ամենէն ատելիս։

ՊԱՐ

Աղտսներով ու մարզվ

Դուն միապէս եղկելի

Ո՞ւր էք թէ բնակ բգեք ճանչնաց չըլայի։

## ԽՈՒԳՈՍ

Թող կորսիշ՝ ան որ քակեց  
Արերս հովուին դժնէ կապէն,  
Եւ ազատեց զիս մահուրնէ.  
Բայց ինձ ջնորդք մը լըրա ան,  
Զի թէ մեռած ըլլայի ես,  
Զէի այսքան մնձ ցաւ մ'ըլլար  
Ոչ սիրելացս եւ ոչ ինձի։

ՊԱՐ

Ո՞ւր էք այդպէս եղած ըլլար։

## ԽՈՒԳՈՍ

Զէի սպանող ըլլար հօրս։  
Զէի կոչուեր մարդոցմէ  
Զիս ծընողին ամուսին։  
Ալդ անսատուած ու թշուառ,  
Ճես պիդերու՝ միացած  
Վնոնց որ ծնան զիս թշուառս,  
Եւ թէ չարէն աւելի չար բան մը կայ  
Անոր անա վիճակուեցաւ իդիսլու։

## ՊԱՐ

Եւ քեզ ի՞նչպէս քաջախորհուրդ անուանեմ,  
Լաւ էր չապրիլ քան թէ ապրիլ կոյր աշքով։

## ԽՈՒԳՈՍ

Դուն ինձի մի սորվեցըներ թէ այսպէս  
Ընելով զէշ ըրի, ու նրատ մի տար ինձ.  
Քանզի հո չեմ զիտեր թէ ի՞նչ աչքերով  
Պիտի տեսնեմ հայրըս զըժուկ երբ իշնեմ,  
Աւ շուառական մայրըս, որոնց երկուքին  
Անան զարիք ըրի, որ ինձ պիտի լայ  
Խեղդուար շատ թեթեւ. — ինձի անկասկած  
Զականիներուս գէմքը տեսնելը քայլը էր,  
Ի՞նչպէս ըուսած ալ ըլլային, ոչ սակայն  
Իմ աշքըովս. ոչ այս քազաքը, ոչ բերդն,  
Ոչ աստուածոց սուրբ պատկերները, որոնցմէ  
Ես զրկեցի ինպիկս յաւէշ շուառական,  
Ես թեքէի մէջ բարենունդը միակ,  
Երբ ամնուն հրաման տրւի որ մերժն  
Ամպարշչոն, ան զոր աստուածները ցուցին  
Պիղդ քրէիբուր, եւ լայոսի արիւնէն։  
Ես որ զըտայ իմ մէջօ այնքան քարուականք  
Զանոնք ուղիղ աչքով տեսնել կրնայի։  
Ո՞չ. եթէ նոյն հոկ հնար ըլլար իմբ դընել  
Լըսողութեան ցնցուղներուն, ևս սիրով  
Ազատէր պիտի Ցուռա իմ մարմնսն  
Ծըլալով մի և նոյն ատեն կոյր և լուլ։  
Քաղցր է զզացումը ցունենալ տանջանքին։  
Կիթերոն, զիս ինչո՞ւ առիր, եւ ինչո՞ւ  
Եթէ առիր՝ ըլսպանեցի նոյնենետայն  
Որ չայստներէր թէ որոնցմէ՝ ծնած էի,  
Ո՞վ Պոլիբոս եւ Կորոնթոս, և ո՞վ իմ  
Հայրենական կարծեցեալ հին ապարանք.  
Ի՞նչ չարասազօն զեղեցկութիւն սնուցիք զիս,  
Զի անա պիղդ ծընողքէ պիղդ մըն եմ ես,  
Ո՞վ նուրբ շաւիդ, որ բմակեցիք հօրս արիւնն  
Իմ ձեռքիրով թափուած, արդեօս կը յիշէք  
Դուք թէ ես ի՞նչ գործ գործեցի ձեր առջեւ,  
Եւ յետոյ հոս զալով ինչե՞ն ըրի ես։

24

Ո՞վ հարսանիք, ով հարսանիք, ծընար զիս,  
ու զիս ծնկով, միեւնոյն սերմը նորէն  
ծանիլ արէիր, եւ հանեցիր գուրը հայրէր  
և եղբայրներ ու զաւակներ, տոհմային  
Ալբին, հարօն, ամուսիններ ու մայթեր,  
եւ ուրիշ ինչ որ կայ մարդոց մէջ անարգ։  
Բայց (զի բաներն որ չեն լուսիր՝ ապէի չէ  
որ գործընին), ո՞ն, զիս փութով ծակեցէք  
Կամ մնոցուցէք եւ կամ թէ ծով նիստեցէք,  
Որպէս զի այլ եւըս գուրք զիս շտտեննէք։  
Օ՞ն հաճեցէք դպչի մարդու մը թշուառ,  
Հաւատացէք ինձ, մի՛ վախնաք. բաց ինէ  
Ու որ կրնայ չարկիններուս հանդուրժել։

## ԳԱՐ

Կրէոն ահա կու զայ յարմար ատենին,  
Անի կրնայ գոհացնէլ քու ինդիթք  
Եւ տալ քեզի խորհուրդ, զի քու տեղոդ ինք  
Կը մընայ այս երկրիս իշխան եւ պահպան։

## ԻՆԻԳՈՍ

Աւան, եւ ինչ ըստեք պիտի այդ մարդուն։  
Ի՞նչ բանի յոյս իրմէն կրնամ ունենալ,  
Երբ ես իր հետ միշտ շարութեամբ վարուեցայ։

## ԿՐԵՈՆ

Իդիպոս, զեր թշնամանող չեմ ի զար,  
Եւ ոչ ալ քեզ կշտամբելու՝ առաջին  
Զարիքներուդ համար։ Բայց գութ, թեքացիք,  
Մահկանացուաց ազգէն թէ չէք պատկասիք,  
Ակնածեցէք զոնէ բոցէն թագաւար  
Ալիքակին որ կը տաձէ ամէն ինչ,  
Եւ մի՛ ցուցնէք ատանկ սնիր մ'անըածօղ,  
Զօր ոչ երկիր եւ անձրէ սրբանուէք  
Եւ ոչ ալ լոյս երքէք պիտի հանուրթեն։  
Այլ զանիկա դութովի իր տոնու տարէք։  
Ազականաց միայն վայել է Ալլալ  
Ականատես ազգականիք մ'ազէւթին,  
Եւ լըսել իր հեծութիւններն ու ողբերն։

## ԻՆԻԳՈՍ

Աստուածներուն անունով, ինձ քանզի գուն  
Ծապասածէս վեր բարենէք երեւար՝  
Մարդոց մէջ պինտ յանցապարտիս, լըսէ ինձ,  
Քեզի համար պիտի խօսիմ եւ ոչ ինձ։

## ԿՐԵՅՆ

Եւ ինչ շընորհ ինէ կ'ուզեն ունենալ։

## ԻՆԻԳՈՍ

Զիս այս երկրէն փութանակի հալածէ  
Այնպիսի տեղ մ', ուր ոչ հետք խօսի։

## ԿՐԵՈՆ

Կ'ընէի՝ լաւ զիտցիր, եթէ չուզէի  
Նախ հարցընել աստուածին ինչ ընելիքս։

## ԻՆԻԳՈՍ

Անոր պատզամն ամբողջ յայտնի է արդէն,  
Զիս ամպարիշտըս՝ հայրապանն մնոցընել։

## ԿՐԵՅՆ

Ալիքա այդպէս ըսուեցաւ, բայց հարկ է  
Երկրորդ անգամ մըն ալ խորհուրդ հարցընել։

## ԻՆԻԳՈՍ

Ինձ պէս ինեղնին համար պիտի հարցընել։

## ԿՐԵՅՆ

Որպէս զի դուն ալ հաւատաս աստուածին։

## ԻՆԻԳՈՍ

Ցոյշը վըրադ է եւ քեզի կ'աղաքմ,

Կանգնէ ուզած շիրիմդ անո՞ր՝ որ ներսն է,

Քոյրդ է, ապաք է որ այս պարագդ ընես։

Խսկ զիս երեք հայրենական այս քաղաքն

Արժանի թող ըլգատ՛ ցորչափ ապրիմ՛

Ընդունելու իր ծովն իբրև բընակիչ։

Այլ թող որ եւ լըններուն մէջ ըընակիմ՝

Կիթեռոնին՝ ուր հայրս ու մայրս զըրին զիս

Ողջ՝ իբր յատուկ իմ զերեզմանս, ուր մնոնիմ

Անպէս՝ ինչպէս զիս կ'ուզէին մնոցընել։

Ոչ խօթութիւն եւ ուրիշ ոչէ գիպուած

Պիտի չըսան ինծի մահ՝ շատ լաւ զիտեմ։

Մահէ պիտի չազատէի ես երբեք

Թէ ըլլայի պահուած ուրիշ ահաւոր

Թշուառութեան. ճակատագիրս թող երթայ

Ուր որ երթայ պիտի. բայց գում, ով կրէոն,

Մի՛ քաշեր իօզն իմ մանչերուս, ալ մարդ են,

Կրնան զտնել պատու մ' հաց ուր ալ պլան.

Բայց իմ երկու գերախուս ու հէզ աղջիկներս,

Որուն ինձի սնդանակից էին միշտ

Եւ իմ կերած կերակուրէս կ'ուտէին,

Զանոնք ես քու լընամբներուս կը յանձնեմ։

Մանաւանդ թոյլ տուր որ զաննիք գրկմ ես

Եւ աղէւներս արտասուծմ անոնց հետ:

Ընէ ինդիրըս, իշխան, ի ծնէ իսկ ազնիւդ։

Պիտի կարծեմ՝ զանոնք իմ զիրկս առնելով՝

Թէ դու զաննիք կը ժառանգեմ, ինչպէս երբ

Կը տեսնէի լոյսն ինչ կ'ըսեմ, յանուն դից։

Զէ՞ որ ահա ես կը լըսեմ իմ սիրուն

Զաւակներուս արտասուաթոր հեկեկանքն։

Կրէոն զթալով վըրաս զրկեր է ինծի

Որդենակներուս մէջ ամէնէն սիրուններն։

Արդեօք ըստո՞յք է ինչ որ ես կը խօսիմ։

ԿՐԵՈՆ

Այս, ես ինքս հոգացի զայդ, գիտնալով  
թէ որքան այդ երջանկութեան կ'ըղձայիր:

ԻԴԻՊՈՍ

Արդ երջանիկ եղիր, եւ թող աստուածներն  
Այս բարիփիդ համար հակեն քու վըրադ

Լաւազոյն քան թէ իմ: Ո՞ւր էք, որդիկանիր,  
Եկէթ, եկէթ եղբայրական թեւերուս,

Որ տըլին ձեզ այսպէս աշքնըը տեսնել՝  
Փայլուն երբեմըն՝ ձեզ անկող հօրս, այնպէս

Որ ես անգէտ եւ անխնդիր՝ երեւցայ

Զեզ հայր՝ ուսկից ես ինքս էի արօրուած.

Ու կու լամ ձեզ — զի չեմ կրնար տեսնել ձեզ —  
Մըտածելով այս գառնութեանց վրայ զոր գութ

Պիտի տեսնէք ցորչափ ապրիք մարդոցմէ:

Վասրն զի ո՞ր քաղաքացւոց ակումբին

Կամ հանդէսին պիտի երթաք՝ ու չդառնաք  
Տուն լալազին՝ փոխանակ գուարթ դառնալու:

Ու երբոր ձեր հարսնութեան օ՞րը համի,  
Ո՞վ պիտի երբէք յանդըզնի այն քարուականըն

Որ իմ ծնողքիս ու իմ վըրաս կը ճնչէ՝  
Արհամարնել. ի՞նչ աղէտ հոս կը պակսի.

Զեր հայրը իր հայրն ըսպաննեց. արօրեց  
Այսու ուր որ ինք սերմանուեցաւ, եւ ըզձեզ

Ռւնեցաւ այն ծոցէն՝ ուր ինք կեանք առաւ:  
Պիտի լըսէք այս նախատինքն, եւ ովք ձեզ

Կին պիտի առնէ. եւ ոչ մէկն, ովք որդեաներ:

Պիտի ամուրիք արօսանաք ու խամրիք:  
Մենիկէի որդիք, զի լոկ գուն մնացիր

Այս երկութին հայր (քանզի մենք երկութինս  
Որ անոնց կեանք արելնք՝ կորանք) մի ծղգէք

Զանոնք ձեռքէ, ազգականներդ թող աղքատ՝  
Անամուսին ըլթափառին. մի աննոց

Բաժին հաներ աղջտներէս, այլ վրանին  
Գըթա, մանսուկ են, չունին ոչ մի նեցուկ

Բաց ի քննէ: Հաւանէն, ովք դու վեհանձն,  
Եւ ձեռքըդ տորեր իսկ ձեզ, ովք իմ զաւակներս,

Եթէ հասնէր խելքերնիք՝ շատ խըրատներ  
Կու տայիր ես: Ալդ ձեզ լոկ այս կը մաղթեմ.

Ո՞ւր ալ ապրիք՝ ո՞ն, լաւազոյն բախտ մը թող՝  
Քան ձեզ ծընող հօրը՝ ժպարի միշտ ձեզի:

ԿՐԵՈՆ

Կը բաւէ լացը. մըտիք ներս արքունիք:

ԻԴԻՊՈՍ

Կը հնազանդիմ՝ թէեւ ցաւով:

ԿՐԵՈՆ

Ամէն ինչ

Իր ատենին լաւ է:

ԻԴԻՊՈՍ

Կ'երթամ, բայց գիտե՞ս

Ի՞նչ պայմանով:

ԿՐԵՈՆ

Ըսէ տեսնեմ որ գիտնամ:

ԻԴԻՊՈՍ

Ջիս այս երկրէս պիտի վտարես:

ԿՐԵՈՆ

ԱՄԻԿԱ

Աստուածներուն կ'իշնայ:

ԻԴԻՊՈՍ

Բայց ես ատելի

Դարձայ անոնց:

ԿՐԵՈՆ

Այդ պատճառաւ փութապէս

Պիտի լըսն խնդիրքդ:

ԻԴԻՊՈՍ

Իրամ կը խօսիս:

ԿՐԵՈՆ

Չըմըտածածըս շաղփաղփել չեմ սիրեր:

ԻԴԻՊՈՍ

Հանէ՛ ուրեմըն զիս ասէի:

ԿՐԵՈՆ

• 0ն, եկուր,

Բայց աղջիկներըդ թող:

ԻԴԻՊՈՍ

Զանոնք դուն ինէ

ՄԻ ապլուպէր:

ԿՐԵՈՆ

Մի ուզեր գուն ունենալ

Ամէն բան. ինչ որ ունեցար կեանքիդ մէջ

Անոնք ամէնքը չեկան քու ետեւէդ:

ՊԱՐ

Ո՞հ հայրենի երկրիս բնակներ, թեքացիք,

Ամենազօր այս իգիպոսն որ լուծեց

Ալեղծուածներ զալունածածուկ, չնայեցաւ

Ցաշաղանքով քաղաքացւոց բախտին վրայ,

Տեսէք թէ ինչպէս զորեցաւ ահաւոք

Աղէտուներու անդունդն, որպէս զի երբէք

Դուք երանի չըրտաք ոչը վերջին օրը տեսնէք,

Մինչեւ առանց ցաւի կեանքին ծայրն հասնի:

Թրգմ. Հ. Ա. ՂԱԶԻԿԱՆ

ՎԵՐՁ